



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՈՐՈՇՈՒՄ**

” 12 ” մարտ 2011 թ.

թիվ 02-Ն

**ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
"21" մարտի 2011թ.
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 60311142
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ
ԱՊՐԻԼԻ 1-Ի ԹԻՎ 7(390) ՏԵՂԵԿԱԳՐՈՒՄ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԵՎ ԽՈՇՈՐ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ
ՏՆԵՐԻ (ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՀՐԱՀԱՆԳԸ»
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

հաստատել «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի ընթացքում քաղաքներում և խոշոր գյուղերում տների (շինությունների) ցուցակները կազմելու կարգի հրահանգը՝ համաձայն հավելվածի:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԵՎ ԽՈՇՈՐ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ
ՏՆԵՐԻ (ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՑՈՒՑԱԿՆԵՐԸ
ԿԱԶՄԵԼՈՒ ԿԱՐԳԻ

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Տների (շինությունների) ցուցակների կազմումը հանդիսանում է մարդահամարի նախապատրաստման հիմնական աշխատանքներից մեկը:
Տների ցուցակներն անհրաժեշտ են.

1) քաղաքների և խոշոր գյուղերի տարածքները հաշվային, հրահանգչական և մարդահամարի տեղամասերի սահմանագատելու,

2) մարդահամարի ընթացքում բնակչության հաշվառման ամբողջականությունն ապահովելու և կրկնակի հաշվառումը բացառելու համար:

2. Տների ցուցակները կազմվում են մեկ օրինակից, հատուկ այդ նպատակով հրահանգավորված աշխատողների՝ ցուցակագրողների կողմից տները (շինությունները) շրջագայելու միջոցով՝ ապահովելով իրենց հատկացված ցուցակագրման տեղամասի ամբողջական ընդգրկումը:

Աշխատանքներն իրականացվում են մեկ ամսվա ընթացքում՝
սկսած 2011 թվականի հունիսի 1-ից:

3. Մինչև տների ցուցակների կազմումը ցուցակագրողը պետք է հրահանգավորվի, այնուհետև ծանոթանա ցուցակագրման իր տեղամասին՝ համեմատելով այն իրեն հատկացված տեղամասի սխեմատիկ հատակագծի հետ:

4. Տների (շինությունների) ցուցակները՝ **Ձև թիվ 1 քաղաքային - Աղյուսակ 2** (հավելված 2), կազմվում են ըստ առանձին թաղամասերի՝ յուրաքանչյուր թաղամասի տները շրջագայելով և դրանք ըստ համարների հաջորդականության գրանցելով: Մեկ ցուցակում երկու կամ ավելի թաղամասերի տվյալները գրանցել չի թույլատրվում:

5. Սույն հրահանգում օգտագործված հասկացությունները կիրառվում են միայն վիճակագրական նպատակով:

6. **Տուն** (շինություն) համարվում է ինքնուրույն շինարարական համակարգը, որն ունի առանձին փոստային (թվային, տառային) համար. օրինակ՝ 13, 7/3, մասնաշենք Ա և այլն:

7. **Թաղամաս** համարվում է բնակավայրի կառուցապատված տարածքի այն մասը, որը սահմանազատվում է փողոցներով, հրապարակներով, նրբանցքներով, անցուղիներով և այլնով: Եթե բնակավայրում առկա է նաև զանգվածային կառուցապատում՝ սահմանափակված ազատ (չկառուցապատված) տարածքով, ապա ցուցակներն այդտեղ կազմվում են յուրաքանչյուր առանձին զանգվածի համար: Պարզ արտահայտված թաղամասային (զանգվածային) կառուցապատման բացակայության դեպքում բնակավայրի տարածքն անհրաժեշտ է բաժանել պայմանական թաղամասերի (զանգվածների), դրանք համարակալել և յուրաքանչյուրի համար կազմել առանձին ցուցակ:

8. Տների ցուցակները փողոցներով կազմել թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում, երբ բնակավայրը բաղկացած է մեկ կամ մի քանի զուգահեռ փողոցներից: Ընդ որում, եթե հնարավորություն կա փողոցը բաժանել մասերի նրբանցքներով, անցուղիներով և այլնով, ապա հարկավոր է յուրաքանչյուր այդպիսի մասի համար կազմել առանձին ցուցակ:

9. Տների ցուցակները կազմելիս ցուցակագրողը ճշտում է իր տեղամասի սխեմատիկ հատակագիծը, ավելացնում նոր կառուցված ու կիսակառույց շինությունները և ջնջում քանդվածները: Բնակավայրի սխեմատիկ հատակագծի վրա թաղամասերը և զանգվածները նախօրոք համարակալված կլինեն տվյալ բնակավայրի սահմանում հերթական համարներով, որը պետք է ճշգրտվի Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (այսուհետև ՀՀ ԱՎԾ) աշխատակազմի մարզային գործակալությունների տարածքային բաժնի պատասխանատու անձանց կողմից:

10. Ցուցակագրողը տների (շինությունների) ցուցակներում պետք է նշումներ կատարի նաև շրջագայության ժամանակ իր տեղամասում հայտնաբերված փողոցների անվանացույցերի և տների համարանիշերի բացթողումների մասին: Շրջագայության ժամանակ հայտնաբերված բոլոր թերությունների և ուղղումների մասին ցուցակագրողը պետք է տեղեկացնի ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատու անձին՝ ներկայացնելով գրավոր զեկուցագիր:

II ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԿԱՐԳԸ

11. ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատու անձից ցուցակագրողը ստանում է ցուցակագրողի վկայական, տների ցուցակների՝ **Ձև թիվ 1 քաղաքային - Աղյուսակ 1** (հավելված 1), **Ձև թիվ 1 քաղաքային-Աղյուսակ 2**, բավարար քանակությամբ ձևաթղթեր, հրահանգ՝ տների ցուցակների կազմման կարգի, ցուցակագրման տեղամասի հատակագիծ, բնակարանային ֆոնդի սեփականատերերի կամ նրանց կողմից լիազորված մարմինների հասցեներ:

12. Ցուցակագրողը տների ցուցակագրումն ըստ թաղամասերի (զանգվածների) սկսում է Ձև թիվ 1 քաղաքային-Աղյուսակ 2-ի լրացումից, որի հասցեամասում լրացնում է սխեմատիկ հատակագծի վրա նշված թաղամասի (զանգվածի) համարը և նկարագրում դրա սահմանները՝ պողոտաների, փողոցների, հրապարակների, նրբանցքների, փակուղիների և այլնի անվանումները և թաղամասերը շրջափակող անկյունային շենքերի համարները, ընդ որում անհրաժեշտ է համապատասխան նկարագրություն տալ նաև զանգվածների սահմանների վերաբերյալ: Եթե տների ցուցակները կազմվում են փողոցի կամ նրա մի մասի համար, ապա հասցեամասում գրվում է դրա անվանումը, իսկ սահմանների նկարագրման մասում՝ ցուցակի մեջ մտցված առաջին և վերջին տների համարները:

13. Եթե մեկ թաղամասի տների ցուցակների լրացման համար օգտագործվում են մի քանի թերթեր, ապա թաղամասի (զանգվածի) համարը, հասցեն և սահմանների նկարագրությունը լրացվում են միայն առաջին թերթի վրա, իսկ մնացած թերթերի վրա լրացվում է միայն թաղամասի համարը և էջակալվում (օրինակ՝ էջ 2, էջ 3 և այլն):

14. Ձև թիվ 1 քաղաքային-Աղյուսակ 2-ում գրանցվում են տվյալ թաղամասի (զանգվածի) տարածքում գտնվող բոլոր տները (շինությունները), որտեղ բնակվում կամ կարող է բնակվել բնակչություն, ինչպես նաև հիմնարկների, կազմակերպությունների կողմից զբաղեցրած շենքերն ու շինությունները:

15. Թաղամասից (զանգվածից) դուրս, այսինքն՝ դրանից որոշակի հեռավորության վրա գտնվող տները, ներառվում են այն թաղամասի (զանգվածի) ցուցակի մեջ, որին ավելի մոտ են և գրանցվում են ցուցակում թաղամասի (զանգվածի) բոլոր տները գրանցելուց հետո՝ «Թաղամասից (զանգվածից) դուրս» նշումով: Ցուցակում անհրաժեշտ է ներառել նաև այն տարածքները, որտեղ կատարվում են բնակելի և ոչ բնակելի կառույցների շինարարություն, քանի որ մարդահամարի անցկացման պահին այդտեղ շինարարությունը կարող է ավարտված լինել, իսկ շինությունը՝ բնակեցված: Թաղամասում շրջագայության ժամանակ ցուցակագրողը պարտավոր է մտնել

նան թաղամասի ներսը՝ թաղամասի ներսում գտնվող տների բացթողումից խուսափելու համար:

16. Յուրաքանչյուր տուն (շինություն) ցուցակում գրվում է առանձին տողով, համարների հաջորդականությամբ՝ նշելով տների (շինությունների) քանակը: Ընդ որում, թաղամասի (զանգվածի) ներսում գտնվող տները նշվում են համապատասխան փողոցում դրանց համարակալման կարգով:

17. Ձև թիվ 1 քաղաքային-Աղյուսակ 2-ի 1-5-րդ սյունակները լրացվում են տները (շինությունները) շրջագայելու ժամանակ: Բնակարանների քանակի և բնակչության թվաքանակի (6-7-րդ սյունակներ) վերաբերյալ տվյալները յուրաքանչյուր տան համար ցուցակագրողը լրացնում է ըստ բնակարանային ֆոնդի սեփականատիրոջ կամ նրա լիազոր մարմնի կողմից տարվող սկզբնական հաշվառման տվյալների՝ տների տեխնիկական անձնագրերի, բնակարանային քարտերի, իսկ քաղաքացիների սեփականություն հանդիսացող տներում՝ դրանց սեփականատերերի կողմից ներկայացված տվյալների հիման վրա:

18. Ձև թիվ 1 քաղաքային- Աղյուսակ 2-ում լրացվում են.

1) 1-ին սյունակում՝ հերթական համարը,

2) 2-րդ սյունակում՝ պողոտայի, փողոցի, նրբանցքի, հրապարակի, անցուղու և այլնի անվանումը, ընդ որում, այդ անվանումը ցույց է տրվում մեկ անգամ՝ տվյալ փողոցի առաջինը գրված տան դիմաց, իսկ մյուս տների դիմաց դրվում է կրկնողության նշան (-"-),

3) 3-րդ սյունակում՝ տան (շինության) համարը, ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ (օրինակ 7բ, 3/2 և այլն): Եթե տունը (շինությունը) բաղկացած է մի քանի մասնաշենքից կամ շինությունից, ապա յուրաքանչյուր մասնաշենք կամ շինություն տների ցուցակում գրանցվում է առանձին տողով, նշելով ընդհանուր համարը և մասնաշենքի համարը. օրինակ՝ 3 մասնաշենք Ա, 7 մասնաշենք Բ, 17 մասնաշենք 1:

4) 4-րդ սյունակում՝ կազմակերպության, հիմնարկի անվանումը, որին պատկանում է տունը, (օրինակ՝ համատիրություն «Մարշալ Բաղրամյան», Լիազորագրային կառավարիչ Նարեկ Պողոսյան և այլն) կամ սեփականատիրոջ ազգանունը (եթե տունը պատկանում է մի քանի սեփականատերերի, ապա գրվում է նրանցից յուրաքանչյուրի ազգանունը):

5) 5-րդ սյունակում՝ բոլոր բնակելի և ոչ բնակելի շինությունների քանակը, որոնք առկա են տվյալ համարի տակ: Շինություն համարվում է առանձին կառույցը: Շինությունների թվում չեն ընդգրկվում տնտեսական նշանակության այն կառույցները, որոնցում, կառուցվածքային առանձնահատկություններից ելնելով, բնակչություն չի կարող բնակվել նույնիսկ ժամանակավորապես:

6) 6-7-րդ սյունակներում՝ բնակարանների քանակի և դրանցում մշտական բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկությունները ցուցակագրողը ստանում է՝ համատիրություններին պատկանող տների վերաբերյալ՝ այդ կազմակերպություններից, հիմնարկներին և կազմակերպություններին պատկանող բնակելի տների, տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպությունների, մանկատների, դպրոցներին կից գիշերօթիկների և գիշերօթիկ դպրոցների, հանրակացարանների, հիվանդանոցների, առողջարանների, հանգստյան տների, հյուրանոցների և այլ կազմակերպությունների կամ հիմնարկների վերաբերյալ՝ դրանց պարետներից, կառավարիչներից կամ վարչակազմից, իսկ քաղաքացիների սեփականություն հանդիսացող տների վերաբերյալ՝ դրանց սեփականատերերից: Բնակարանը, որպես առանձին բնակելի միավոր, պետք է հաշվի առնել այնպես, ինչպես այն ընդունված է բնակֆոնդը տնօրինողի կողմից:

19. Մշտական բնակչությամբ հանրակացարանային տիպի տների համար (տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններ, մանկատներ, դպրոցներին կից գիշերօթիկներ և գիշերօթիկ դպրոցներ և այլն) 6-րդ սյունակում գրվում է սենյակների քանակը, իսկ 7-ում՝ այդ սենյակներում մշտապես բնակվող բնակչության թվաքանակը:

20. Հիվանդանոցներում, ծննդատներում, առողջարաններում, հանգստյան տներում, հյուրանոցներում և ժամանակավոր կացարան հանդիսացող այլ հիմնարկներում, որոնցում կան մշտական բնակչություն ունեցող սենյակներ (բնակարաններ), 6-րդ սյունակում նշվում է այդպիսի սենյակների (բնակարանների) քանակը, իսկ 7-ում՝ դրանցում մշտապես բնակվող բնակչության թվաքանակը:

21. Եթե որևէ բնակելի շենքում գտնվում է նաև հյուրանոց, հիվանդանոց և այլն, ապա 6-7-րդ սյունակներում, համապատասխանաբար, ցույց են տրվում միայն բնակելի շենքի բնակարանների քանակը և դրանցում մշտապես բնակվող բնակչության թվաքանակը, իսկ ծանոթությունում (9-րդ սյունակ) նշվում է, որ այդ շենքում առկա է հյուրանոց, հիվանդանոց և այլն: 8-րդ սյունակում՝ առկա տեղերի քանակը՝ բնակչության ժամանակավոր կացարան հանդիսացող հիմնարկներում (հիվանդանոց, հյուրանոց, հանգստյան տուն, առողջարան և այլն): 9-րդ սյունակում՝ «Ծանոթություն», նշումներ են կատարվում փողոցների անվանացույցերի, տների համարանիշերի բացակայության և այլնի մասին:

22. Կառուցվող բնակելի և ոչ բնակելի շինությունների համար՝ 3-րդ սյունակում գրառվում է տան համարը (համարի բացակայության դեպքում դրվում է գծիկ), 4-րդ սյունակում նշվում է տան սեփականատիրոջ՝ իրավաբանական անձի անվանումը կամ մասնավոր անձի դեպքում՝ նրա ազգանունն ու անունը, 5-8-րդ սյունակներում դրվում են գծիկներ, իսկ

ծանոթությունում (9-րդ սյունակ) գրվում է՝ «Շինությունը կառուցվում է» կամ «Կատարված է հողահատկացում»:

23. Ցուցակագրման տեղամասի բոլոր տները (շինությունները) շրջագայելուց և ըստ բոլոր թաղամասերի (զանգվածների) ցուցակները կազմելուց հետո, ցուցակագրողը ցուցակների տվյալները համեմատում է իր տեղամասի հատակագծի հետ, որի վրա շրջագայության ժամանակ կատարվել են բոլոր փոփոխություններն ու ուղղումները: Համոզվելով, որ բոլոր տները մտցված են ցուցակում, ցուցակագրողն ըստ յուրաքանչյուր թաղամասի (զանգվածի) հաշվում է 3-րդ (տների քանակը՝ ներառյալ կառուցվող) և 5-8-րդ սյունակների հանրագումարները:

24. Այնուհետև կազմվում է Ամփոփագիր՝ Տեղամասի տների ցուցակների Ձև թիվ 1 քաղաքային Աղյուսակ 1-ը (ամբողջությամբ ցուցակագրման տեղամասի համար), այնտեղ լրացնելով յուրաքանչյուր ցուցակագրման թաղամասի (զանգվածի) հանրագումարները:

25. Ձև թիվ 1 քաղաքային-Աղյուսակ 1-ում լրացվում են.

- 1) 1-ին սյունակում՝ հերթական համարը,
- 2) 2-րդ սյունակում՝ թաղամասի (զանգվածի) համարը,
- 3) 3-6-րդ և 8-րդ սյունակները լրացվում են Աղյուսակ 2-ի 3, 5-7 համապատասխան սյունակների տվյալներից,
- 4) 7-րդ սյունակում նշվում է ինչպես առանձին շենքերում, այնպես էլ բնակելի շինություններում տեղակայված ժամանակավոր կացարան հանդիսացող հիմնարկների քանակը (Աղյուսակ 2-ի սյունակ 8),
- 5) 9-րդ սյունակում (Ծանոթություն) նշում է կատարվում ոչ բնակելի շինությունների մասին (Աղյուսակ 2-ի սյունակ 9):

26. Ցուցակագրողները տների ցուցակները՝ Ձև թիվ 1 քաղաքային (Աղյուսակ 1 և Աղյուսակ 2) ձևաթղթերը, ճշգրտված սխեմատիկ հատակագծերի հետ հանձնում են ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատու անձին՝ **մինչև 2011 թվականի հուլիսի 1-ը**: Նշված փաստաթղթերի ստուգումից և ընդունումից հետո ցուցակագրողը և ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատու անձը ստորագրում են այն և նշում ընդունման ամսաթիվը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի Հանրապետության
2011 թվականի մարդահամար**

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի
ընթացքում քաղաքներում և խոշոր գյուղերում տների (շինությունների)
ցուցակները կազմելու կարգի հրահանգի

Ձև թիվ 1 քաղաքային - Աղյուսակ 1

**Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր
Տեղամասի տների ցուցակների**

Մարզ ----- Տարածաշրջան ----- Քաղաք ----- Ցուցակագրման տեղամաս ----

Շինության համար Հեղթական	Թաղամասերի (զանգվածների) համարները	Տների քանակը	Բնակելի և ոչ բնակելի շինություն- ների քանակը	Դրանցում		Ժամանակավոր կացարան հանդիսացող հիմնարկների		Ծանոթություն
				բնակարանների քանակը	բնակչության թվաքանակը ցուցակների կազմման պահին	քանակը	առկա տեղերի քանակը	
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
Ընդամենը								

Ցուցակագրող -----
(ստորագրություն)

ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության
տարածքային բաժնի պատասխանատու -----
(ստորագրություն)

«-----» ----- 2011թ.

Ց ՈՒ Ց Ա Կ
Թաղամասի (զանգվածի) տների

Թաղամասի (զանգվածի) սահմանների նկարագրությունը

Մարզ -----

Տարածաշրջան -----

Քաղաք -----

Ցուցակագրման տեղամաս ----- Թաղամաս (զանգված) -----

Հերթական նմուշի նիշ	Պողոտայի, փողոցի, հրապարակի, նրբանցքի, անցուղու և այլնի անվանումը	Տան (շինու- թյան) համարը	Կազմակերպության անվանումը, կամ սեփականատիրոջ ազգանունը	Բնակելի և ոչ բնակելի շինություն- ների քանակը	Դրանցում		Ժամանակավոր կացարան հանդիսացող հիմնարկներում առկա տեղերի քանակը	<i>Ծանոթություն</i>
					բնակա- րանների քանակը	բնակչության թվաքանակը ցուցակների կազմման պահին		
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
Ընդամենը թաղամասում (զանգվածում)								X

Ցուցակագրող -----

(ստորագրություն)

ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության
տարածքային բաժնի պատասխանատու -----

(ստորագրություն)

«-----» ----- 2011թ.